

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**1. Համայնքի 2020 թվականի առաջին կիսամյակի բյուջեի կատարողականը՝**

2020 թվականի համայնքի բյուջեի սեփական եկամուտներն առ 30.06.2020թ. դրությամբ 8420,7 հազար դրամ է, որը հաշվետու ժամանակաշրջանի համար կազմում է 34,0%:

**ԲՅՈՒԵՋԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**

հազար դրամ

	Եկամուտների տեսակները	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան		
			Հաշվարկային պլան	Փաստացի	Տոկոս
1	հողի հարկ	1900,0	900,0	481,1	53,5
2	Գույքահարկ	7417,4	3265,0	2252,2	69,0
3	տեղական տուրքեր	260,5	130,0	208,5	160,0
4	վարձակալական վճար	690,4	345,2	137,5	39,8
5	տեղական վճար	6650,0	2805,0	745,8	26,6
6	դոտացիա	28841,7	14420,8	15556,2	
7	Այլ եկամուտներ	0	0	2479,7	
8	հողի օտարումից եկամուտներ	0	0	2115,9	
9	տարեսկզբի ազատ մնացորդ	4384,0	4384,0	4384,0	
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>50144,0</b>	<b>26250,0</b>	<b>28360,9</b>	<b>108,0</b>

**ԲՅՈՒԵՋԻ ԾԱԽՍԵՐ**

հազար դրամ

	Ծախսերի տեսակները	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան		
			Հաշվարկային պլան	Փաստացի	Տոկոս
<b>Վարչական բյուջե</b>					
1	կառավարման ապարատ	15545,0	7500,0	7357,9	98,1
2	ընդ.բնույթի հանրային ծառայություն	1536,0	1000,0	683,4	68,3
3	նախադպրոցական կրթություն	17800,0	7000,0	5800,0	82,9
4	մշակույթ, սպորտ, կրոն	5000,0	3000,0	2920,0	97,4
5	աղբահանություն	1380,0	575,0	575,0	100,0
6	սոց. ծրագրեր	300,0	200,0	90,0	45,0
7	Գյուղատնտեսություն	545,0	275,0	270,9	98,5
8	Պահուստային ֆոնդ	3654,0			
<b>Ֆոնդային բյուջե</b>					
1	Կապիտալ շինարարություն	3824,0	3824,0	350,0	9,2
2	Ճանապարհների նորոգում (նախորդ տարվա պարտք)	300,0	300,0	300,0	100,0
3	Նախագծային ծախսեր	260,0	260,0	260,0	100,0
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>50144,0</b>	<b>23934,0</b>	<b>18608,0</b>	<b>77,7</b>



*2. 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի հաշվին կատարված աշխատանքները և ծախսերը.*

1. Հրավիրվել և անցկացվել է ավագանու 2 նիստ, որի ընթացքում ընդունվել է ավագանու 14 որոշում:
2. Ընդունվել է համայնքի ղեկավարի 22 որոշում, արձակվել՝ 17 կարգադրություն:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան և այլ կազմակերպություններ են ուղարկվել 176 գրություններ:
4. Բնակիչներին տրամադրվել են 94 տարբեր բնույթի տեղեկանքներ:
5. Համայնքի ղեկավարին են ներկայացվել 22 դիմումներ, կատարվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել նրանց առաջարկությունները, դիմումները, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ դրանց լուծման ուղղությամբ:
6. Այգեկ համայնքի 2020 թվականի բյուջեից տրամադրվել է դրամական օգնություն՝ ընդամենը 90000 դրամ, որից՝
  - 1) համայնքի 2 ընտանիքի՝ 70000 դրամ,
  - 2) «ՎԻԿՏՈՐԻԱ» մարդասիրական կազմակերպությանը՝ 20000 դրամ:
7. Պայմանավորված կորոնավիրուսով և երկրում հայտարարված արտակարգ պայմաններով, համայնքի թվով 115 կարիքավոր ընտանիքների ցուցաբերվել է աջակցություն՝ պարենային ապրանքներով՝ 672750 դրամ գումարով (յուրաքանչյուր ընտանիքի՝ 5850 դրամի մթերք):
8. Համայնքում 1500,0 քմ մակերեսով զբոսայգի կառուցելու համար ձեռք է բերվել կառուցման նախահաշիվ 200000 դրամ գումարով: Զբոսայգու կառուցման նախահաշիվ-ծավալաթերթի ընդհանուր գումարը կազմել է 6614910 դրամ: Աշխատանքների ձեռք բերման համար հայտարարված գնանշման հարցման մրցույթի հայտ է ներկայացրել մեկ մասնակից՝ 6600000 դրամ գումարով, որի հետ կնքվել է աշխատանքների կատարման պայմանագիր: Աշխատանքներն ընթացքի մեջ են և կավարտվեն սույն թվականի սեպտեմբերի 3-ին:

Զբոսայգու ցանկապատին դրսից հարող 120 սմ լայնությամբ 95գծմ տարածքի բարեկարգման բետոնե եզրաքարերի և սալիկների տեղադրման համար կնքվել է կապալային աշխատանքների կատարման պայմանագիր, որի ծավալաթերթ-նախահաշիվի գումարը կազմել է 974000 դրամ: Այժմ ընթանում են բարեկարգման աշխատանքներ:
9. Համայնքում կատարվել են նաև շենք-շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ. այն է՝ համայնքապետարանի շենքի հետևի պատի սվաղում: Կատարվել է նաև միջհամայնքային ճանապարհի ասֆալտի փոսալցում:

Կնքված պայմանագրի ծավալաթերթ-նախահաշիվի արժեքը կազմել է 990000 դրամ:
10. Բյուջե է մուտք եղել չնախատեսված եկամուտներ՝
  - 1) ինքնական շինության օրինականացման համար 2479750 դրամ,
  - 2) ֆիզիկական անձի սեփականություն համարվող հողի նպատակային նշանակության փոփոխությունից՝ 2115000 դրամ:

11. Չափագրվել է համայնքային սեփականություն համարվող 2 հողակտոր, որոնց համար ձեռք են բերվել սեփականության վկայականներ:
12. Կատարվել են օրենքով սահմանված բյուջեի պարտադիր ծախսեր:
13. Համայնքի մահացած բնակիչների հիշատակի պատվին գնվել են ծաղկեպսակներ:
14. Պարբերաբար 7 օրը մեկ իրականացվել է աղբահանություն:
15. Աշխատավարձի և պարտադիր սոց. վճարների գծով պարտքեր չկան:

*Առաջնային հիմնախնդիրներից է՝*

1. Գերեզմանատան ցանկապատում և բարեկարգում:
2. Համայնքի գլխավոր հատակագծի գծագրում:

Այգեկ համայնքի  
ղեկավարին փոխարինող



Մ. Արբահամյան

2020 թվականի օգոստոսի 03  
Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզ գ. Այգեկ